ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ապրիլի, 2021 թվականի N 11-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2021 թվականի ապրիլի 29-ին՝ ժամը 12 :00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:
2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

   1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով տարեկան ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին հարցը:
   2. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով տարեկան ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին հարցը:
   3. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով տարեկան ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին հարցը:

4. Հանրային հեռարձակողի խորհրդի 2021 թվականի մարտի 31-ի № 19-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:
5. Հանրային հեռարձակողի խորհրդի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի № 60-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:
6. Հանրային հեռարձակողի խորհրդի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի № 57-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

26 ապրիլի, 2021 թվական
ք. Երևան